



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՏՈՒ 128

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԱՐԴՈՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Երանի աստուածավախ մարդոց,  
անոնց, որոնք Տիրոջ կամփին համաձայն կ'ապրին:  
Եթէ դուն այսպէս ապրիս՝  
աշխատանքիդ արդիւնքը պիտի վայելես,  
երջանիկ պիտի ըլլաս եւ բարի օրեր տեսնես:  
Կինդ պտղալից որթատունկ մը պիտի ըլլայ տանդ մէջ,  
զաւակներդ՝ ձիթենիի նոր տունկերու պէս, սեղանիդ շուրջ:  
Ահա այսպէս կ'օրհնուի  
Տիրոջմէ վախցող մարդը:  
Տէրը Սիոնէն թող օրհնէ քեզ.  
Երուսաղէմին բարօրութիւնը տեսնես  
կեանքիդ բոլոր օրերուն,  
եւ տեսնես քու զաւակներուդ զաւակները:  
Խաղաղութիւն Աստուծոյ ժողովուրդին:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատէր Երրորդութիւն, տուր աշխաճիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղեցոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

**ՀԱԳԱՐ ԵՒ ԻՍՄԱՅԷԼ (16:1-16)**

Ժամանակի մրայնութեան ու սովորութեան համաձայն եղած դէպքերը կրնան փարօրինակ թուիլ այսօր մեզի, բայց այդ էր իրողութիւնը անցեալին, այս պարագային Աստուածաշունչի դէպքերուն հետ կապուած: Օրինակ, ինչպէս ժառանգութեան պարագային, երբ ժառանգորդ չունէր, այդ փան ծառան կրնար ժառանգորդ դառնալ, ինչ որ կը կարդանք Ծննդ 15:2 «քանի որ առանց զաւակի կը մնամ, ահա իմ փանս ծառան ինձի ժառանգորդ պիտի ըլլայ»: Եւ կամ որդեծնութեան հարցով, երբ Սարան արփօնութիւնը կու փայ որպէսզի իր աղախինէն զաւակ մը ծնանի, եւ այդ զաւակը կարծէք իրը ըլլայ: Չնայած այսօր ալ կան այնպիսի երեւոյթներ, որոնք կարծէք կը յիշեցնեն այդ նոյն անցեալի երեւոյթը, երբ այս անգամ այր մարդու սերմը կ'անցնուի այլ կնոջ, եւ կամ նոյնիսկ գործիքներու մէջ:

Ահա այս վիճակին դիմաց է որ կը գրնուի Աբրամ, եւ իր կինը՝ Սարա արփօնութիւնը կու փայ որպէսզի աղախինէն զաւակ մը ծնանի, որովհետեւ Սարա ամուլ էր, չէր ծնաներ: Անցեալին կար այն ըմբռնումը որ ամուլ կինը կարծէք Աստուծմէ անիծուած ըլլար:

Հերաքրքրականօրէն եթէ երբեք այս հարուածը առնենք միայն փառացի կամ բառացի իմաստով, քիչիկ մը դժուար թէ կարենանք ըմբռնել ու հասկնալ իրապէս այնքեղ նշուած խորհուրդը: Այդ իսկ պարճառով, այնպէս ինչպէս Պօղոս Առաքեալը ինք, այս հարուածը ամբողջութեամբ կարելի է դիտել ու կը բացատրել այլաբանականօրէն. Սարան ներկայացնելով Առաքինութիւնը, իսկ Հագարը՝ սկզբնական վիճակը մարդուն: Տակաւին, Պօղոս Առաքեալ այս դրուագին բացատրութիւնը կու փայ Գաղատացիներուն գրած իր նամակին մէջ 4:21-31, ներկայացնելով թէ երկու կիները երկու Ուխտերն են, Հին Ուխտ եւ Նոր Ուխտ: Անոնցմէ մէկը՝ Հագարը, որ ստրուկ զաւակ ծնաւ, Սինա լեռան վրայ կնքուած Ուխտն է, իսկ միւս կինը՝ Սարան, որ ազապ է՝ եւ կը խորհրդանշէ Վերին Երուսաղէմը: Առաջին ծնունդը մարդկային մտածութենէ ծնածը, որ կը հալածէր Սուրբ Հոգիին խոստումով ծնածը:

Այս մօտեցումը նկարի առած կրնանք հետեւեալ ճշմարտութիւնը քաղել:

- 1.- Սարան իբրեւ մարդու առաքինութիւնը:
- 2.- Հագարը իբրեւ մարդու սկզբնական վիճակը, որ ստրվելու, պարտաստրուելու ընթացքի կը կարօտի, եւ կրնայ նաեւ պտուղ փայ, արդիւնք փայ:
- 3.- Բայց յանկարծ այդ պտուղն ու արդիւնքը կրնան պարճառ դառնալ, որ անտեսեն ու անարգեն առաքինութիւնը:
- 4.- Աբրամ միշտ մտիկ ըրաւ առաքինութեան, եւ երբեք զգացական չմօտեցաւ հարցերուն: Երբ Սարա ինք արփօնեց, որ օգտագործէ աղախինը, զաւակ ունենալու իմաստով, եւ ոչ ցանկութեան իբրեւ արփայայտութիւն: Իսկ երբ Հագար անարգեց իր փրորուհին, այս անգամ Աբրամ ըսաւ. «Ահա աղախինդ քու ձեռքդ է, քու աչքերուդ հաճոյ երեւցածին պէս ըրէ անոր»: Մա կը նշանակէ, որ Աբրամ առաւ Հագարը, առանց սակայն, զինքը փնտրելու, օգտագործեց զինքը, առանց սակայն անոր կատուելու, յղացուց, առացն սակայն սիրելու զինքը: Այլ միշտ մնաց հաւատարիմ իր կնոջ, այլ խօսքով՝ առաքինութեան:
- 5.- Հագար կը փախչի Հագարի երեսէն: Անգամ մը որ կարարեալը գայ, ալ սկզբնականին կարիքը չկայ: Անգամ մը որ ճշմարիտ Դաստիարակը գայ, այլ խնամակալ դաստիարակի պէտք չունինք, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ (Գաղ 3:25):
- 6.- Սարայի եւ Հագարի կապը: Ճշմարիտ Աւերարանչութիւնը, Առաքինութիւն եւ Օրէնքը եւ սկզբնական գիտութիւն, դաստիարակութիւն գալիքին շուքը:
- 7.- Հրեշտակը կը խօսի Հագարի հետ: Աստուածային Իմաստութիւնը կը խօսի սկզբնական դաստիարակութեան եւ գիտութեան հետ: Այս մէկը փեղի կ'ունենայ Աստուծոյ թոյլտուութեամբ:
- 8.- Վերադարձի քու փիկնոջ ու անոր ձեռքիդ փակ հնազանդ եղիր: Եթէ երբեք Սարան ճշմարիտ Դաստիարակը կը ներկայացնէ, իսկ Հագարը՝ շուքը, եւ այս պարագային Մովսիսական Օրէնքը, հրեշտակը կը թելադրէ որ ետ վերադառնայ իր փիկնոջ ու անոր ձեռքին փակ հնազանդի:
- 9.- Զու սերունդդ խիստ պիտի շարցնեն: Ի փարբերութիւն Աբրամի փրուած խոստումէն, որ անոր սերունդը աստղերու պէս շար պիտի ըլլայ, նաեւ աստղերու պէս պիտի փայլի: Միւս կողմէ, շարութիւնը այնքան չէ կարելոր որքան ինչպիսին ըլլալը. «Անիկա վայրենի մարդ պիտի ըլլայ»:
- 10.- Կաղէսի եւ Բարադի մէջտեղն է: Այս երկու բառերը կը նշանակեն՝ սուրբ եւ լուսաւորութիւն: